ՍԱՍՆԱ ԾՌԵՐ

(Ժողովրդական վեպի գրառման 100-ամյակի առթիվ)

Ուղիղ հարյուր տարի առաջ, 1873 թ. հունիսին, Գարեգին Սրվանձտյանը Մշո Առնիստ գյուղի երեսփոխան Կրպոյից գրի է առնում «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի անդրանիկ պատումը և հաջորդ իսկ տարին՝ 1874 թ., հրատարակում Կ. Պոլսում՝ իր «Գրոց ու Բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով գրքի երկրորդ մասում։

Երևույթը պատմական էր և հիշարժան երկու տեսակետից. նախ՝ հայտնաբերվում և գիտական աշխարհին էր ներկայացվում հայ ժողովրդական վեպը, և ապա՝ վեպի գրանցումով և հրատարակմամբ, ինչպես ցույց տվեցին գալիք իրադարձությունները, հիմք էր դրվում հայ ժողովրդական բանահյուսության արգասիքների կարգավորված հավաքմանն ու հրատարակությանը։ Գարեգին Սրվանձտյանն ինքը դառնում է հայ բանահյուսության, առավել լայն առումով՝ հայ ժողովրդագիտության ռահվիրան՝ ուղի հարթող առաջամարտիկը։

Գ. Սրվանձտյանի հետևությամբ ու օրինակով տասներեք տարի անց՝ 1886 թ., Մանուկ Աբեղյանը Էջմիածնում, Գևորգյան ճեմարանի դռնապան Մոկացի Նահապետից (Նախո Քեռի) գրանցում է վեպի մեկ այլ տարբերակ, որը 1889-ին հրատարակվում է Շուշիում առանձին գրքով՝ «Դավիթ և Մհեր» խորագրով։ Աբեղյանի գրանցած պատումը պատմական կարևոր արժեք էր ստանում ևս երկու տեսակետից. նախ՝ պարզվում էր, որ բացի Մշո դաշտից, վեպն ընտանի էր և տարածված նաև Արևմտյան Հայաստանի այլ կողմերում. և ապա՝ Աբեղյանի գրանցած պատումը իր տիպաբանական նկարագրով էապես տարբերվում էր Սրվանձտյանի գրառածից։ Այդ երկու պատումով փաստորեն հենց սկզբից, երջանիկ պատահականությամբ, հրապարակ էին հանվում վեպի երկու տիպաբանական հիմնական տարբերակները, որովհետև, ինչպես ցույց տվեցին գալիք վիպահավաքման փորձն ու արդյունքները, անկախ աշխարհագրական իր լայն տարածվածությունից, վեպի մինչև այժմ հայտնի շուրջ 130 պատումները համախմբվում են տիպաբանական հիշյալ երկու տարբերակների տակ, որոնք հայ վիպագիտության մեջ, ըստ սկզբնական պատումների գրառման վայրերի, ավանդականորեն կոչվում են Մ շ ո և Մ ո կ ա ց տարբերակներ։

Մինչև 1970 թ. հայ բանագիտությանը հայտնի էր «Սասնա ծռեր» վեպի շուրջ վեց տասնյակի չափ պատում, որից 48-ը զետեղվել էր Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կազմած և խմբագրած «Սասնա ծռեր» եռադիրք հրատարակության մեջ (1936, 1944 և 1951 թթ.), իսկ մնացածները կամ տպագրվել էին տարբեր տեղերում, կամ էլ մնում են տարբեր արխիվներում անտիպ։ 1950—1960-ական թվականներին, գրեթե երկու տասնամյակ, չի գրանցվում վեպի և ոչ մի պատում։ Միայն «Գարուն» ամսագրում, 1969 թ., բանագետ Գր. Գրիգորյանի տպագրած վեպի մոկաց մի պատումը, ինչպես նաև 1969—1970 թթ. Ախուրյանի և Արթիկի շրջաններում՝ արևմտահայ վերաբնակիչների մեջ հայտաբերված երկու նոր պատումները վկայեցին ժողովրդի մեջ վեպի տակավին կենդանի գոյատևման փաստը։ Այդ և մանավանդ «Սասնա ծռերի» հայտաբերման և հրատարակման հարյուրամյա տարելիցի գալիք հեռանկարը առիթ հանդիսացան լրջորեն զբաղվելու վեպի նոր պատումների որոնման հարցով։ Խնդիրն այն էր, որ հարկավոր էր պարզել, թե վեպի հայտաբերումից մեկ հարյուրամյակ անց, եթե վեպը շարունակում է դեռևս ապրել ժողովրդի հիշողության մեջ, ապա որտե՞ղ, ինչպե՞ս և ի՞նչ չափով, նրա ո՞ր հատվածներում ու խավերում, սեռա-տարիքային ի՞նչ խմբերում։

Հիշյալ նպատակով 1971 և 1972 թթ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը մեր ղեկավարությամբ և մասնակցությամբ կազմակերպեց «Սասնա ծռեր» վեպի նոր պատումների գրանցման հատուկ նպատակային արշավախումբ։ Այն իր գործունեության շուրջ հինգ ամիսների ընթացքում, այցելելով Սովետական Հայաստանի տարբեր շրջանների մոտ 150 բնակավայր, գրանցեց վեպի տարբեր ծավալի ու որակի 65 նոր պատում[1]։

Այդ պատումներից մեկը, որ այժմ հանձնվում է տպագրության, գրանցվել է 1971 թ. օգոստոսի 10-ին, Անիի շրջանի Լանջիկ (Մուսլուղլի) գյուղում, 82-ամյա Սեդրակ Քերոբի Աբաջյանից (Աբաջու Սեթո)։

Սեդրակ Աբաջյանը ծնվել է Արևմտահայաստանում՝ Ալաշկերտի Խաստուր գյուղում, 1889 թ.։ Զբաղմունքով եղել է հողագործ և հացթուխ, այժմ մեղվապահ։ 1914 թ. Սեդրակի ընտանիքը շատերի հետ Ալաշկերտից գաղթում է Արևելահայաստան, սկզբում հաստատվում են Աշտարակում, բայց շուտով վերադառնում են Ալաշկերտ։ Այդտեղ երկար չեն մնում, կրկին ետ են դառնում և այս անգամ բնակություն հաստատում Շիրակի Քավթառլի գյուղում։ Սեդրակը երկու անգամ դարձյալ (1915-ին և 1917-ին) վերադառնում է «երկիր», բայց պատերազմի ու տեղահանումների պատճառով ետ է գալիս և Փամբակում գերի ընկնում թուրքերի ձեռքը։ 1919-ին ազատվում է գերությունից և գալիս Շիրակի Մուսլուղլի գյուղում գտնում ծնողներին, ուր և հաստատվում են մշտական բնակության։ Մուսլուղլիում Սեդրակը զբաղվում է հողագործությամբ, բայց 10-ական թվականներին թափառումների ժամանակ Կարսում սովորում է նաև հացթուխի արհեստը։ 1931—1935 թթ. Սեդրակը, տնտեսական պայմաններից դրդված, գնում է Դոնբաս, Սարդա-

[1] Արշավախմբի գործունեության արդյունքների մանրամասն հաշվետվությունը պատրաստ է և շուտով կհանձնվի տպագրության։ Արշավախմբի 1971 թ. գործունեության արդյունքները 1972 թ. մարտին լսվել և քննարկվել են հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում։

բապադ, Թիֆլիս՝ ամենուրեք զբաղվելով հացթուխությամբ և հողագործությամբ։ 1936—1955 թթ., որոշ ընդմիջումներով աշխատում է Մարալիկում իբրև հացթուխ, այնուհետև Մուսլուղլի գյուղում՝ դաշտավարական բրիգադավար։ 1956 թ. թոշակառու է։

Սեդրակը բազմանդամ գերդաստանի հայր է։ Ջավակներից երկուսն ընտանիքներով բնակվում են Քանաքեռում։ 1961 թ. Սեդրակն ապրում է Քանաքեռում՝ զավակների մոտ, իսկ ամառը գնում է Լանջիկ և զբաղվում մեղվապահությամբ։

Սեդրակ Աբաջյանը խոսքաշեն մարդ է, նշանավոր հեքիաթասաց. հաճախ է հրավիրվել դյուզի օդաները հեքիաթ պատմելու, համագյուղացիների միջավայրում վայելում է մեծ հարգանք։ «Աբաջու Սեթոն հին մարդ է»— այդպես են որակում նրան համագյուղացիները։

Սեդրակը վեպը լսել է պատանի ժամանակ, հայրենի Խաստուրում, Փրո Աբրեից (Աբրահամ Գևորգի Տոնոյան), որը շատ լավ է իմացել ու պատմել վեպը։ Փրո Աբրեն Խաստուրում եղել է նշանավոր բանասաց, խոսքաշեն մարդ։ Երբ խաստուրցիները իմացել են, թե Փրո Աբրեն մի օդայում հեքիաթ է պատմում, լցվել են այնտեղ և մեծ հաճույքով ու հետաքրքրությամբ ունկընդրել նրան։ Սեդրակը վկայում է, որ ինքը վեպը «շատ նուրբ» է սովորած եղել Փրո Աբրեից։ Եղել է երիտասարդ, շատ ուշիմ և լավ հիշել ու ճշգրիտ վերապատմել է վեպը։ Սեդրակը վկայում է նաև, որ Շորագյալում վեպն իմացել են երկուսը. ինքը՝ Սեդրակը և Ղըոխցի Հակոն (դարձյալ խաստուրցի)։ Հակոն մահացել է Հայրենական պատերազմից առաջ։

Սեդրակը եղել է հարևանն ու գրեթե հասակակիցը արդեն հայտնի վիպասաց Կարապետ Թամոյանի[2]։ Վկայում է, թե երբ 1932-ին կամեցել են Կարապետ Թամոյանից գրառել վեպը, վերջինս ձիով եկել է Մուսլուղլի և խնդրել Սեդրակին, իբրև լավ հիշողության տեր, պատմել վեպի մոռացած տեղերը, հատկապես Փոքր Մհերի ճյուղը։ Սեդրակը պատմել է, Կարոն գրի է առել մոռացած հատվածները և տարել։

Սեդրակը Մուսլուղլիում վեպը հաճախ է պատմել, բայց արդեն քառասուն տարի է, ինչ ոչ ոքի չի պատմել։ Երբ կամեցանք գրանցել, մեկ գիշեր ժամանակ խնդրեց վերհիշելու վեպը։ Եվ ինչպես հետագայում պարզվեց, այդ գիշեր Սեդրակը իր շուրջն էր հավաքել թոռներին և քառասուն տարի անց նորից ոգևորվելով պատմել, վերհիշել մոռացված, հատկապես չափածո հատվածները։

Մեկ տարի անց՝ 1972 թ. սեպտեմբերի մեկին, Քանաքեռում Սեդրակ Աբաջյանից հանպատրաստից կատարեցինք վեպի երկրորդ՝ կրկնակի. գրանցումը։ Համեմատությունից պարզվեց երկու գրանցումի գրեթե բառացի նույնությունը։ Բացառությամբ մեկ միջադեպի, որ վիպասացը առաջին գրառման ժամանակ մոռացել էր պատմել և որի մասին նա անմիջապես հիշեց, նախքան երկրորդ ղրանցում կատարելը, մնացածները բառա-ոճական բնույթի աննշան շեղումներ էին՝ բանավոր խոսքի դեպքում անխուսափելի և վերջինիս առանձնահատուկ։

---

2 «Սասունա ծռեր» պատումի ասացող, ծագումով խաստուրցի, վերաբնակված Թալինի Արալը գյուղում։ Նրանից 1932 թ. Կ. Մելիք-Օհանջանյանը գրառել է հիշյալ պատումը (տե՛ս «Սասնա ծռեր», հ. Բ, Ա մաս, Երևան, 1944, Թ պատում, էջ 355—404)։

Մեկ տարվա ընթացքում միևնույն ասացողից կատարած երկու գրանցումների նույնությունը վկայում է. նախ՝ վիպասացի հիշողության մեջ վեպի կայուն ավանդականությունը և ապա՝ պատումի նույնականության արժանահավատությունը վիպասացի բանավոր սկզբնաղբյուրին՝ Փրո Աբրեի պատումին։ Իսկ դա խոսում է պատումի հնության և ավանդականության, առնվազն նրա XIX դ. վերջերի վիճակի մասին, մի բան, որ բարձրացնում է վեպի տվյալ պատումի պատմական արժեքը։

Սեդրակ Աբաջյանի պատումի լեզուն Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքն է՝ Կարնո բարբառի և արդի հայերենի որոշ տարրերով երիզված։ Կարնո բարբառի ազդեցությունն արդյունք է Շիրակում վիպասացի շուրջ կեսդարյա բնակության և այդ բարբառով խոսող վայրերում նրա երկարատև աշխատանքային գործունեության։

Սեդրակ Աբաջյանի պատումը տիպաբանորեն պատկանում է Մշո տարբերակների խմբին. ամբողջական է, բաղկացած չորս ճյուղից։ Մշո խումբն աշխարհագրորեն ընդգրկում է Մշո դաշտը, Սասունը, Ալաշկերտը, Մանազկերտը, Բուլանըխը, Խնուսը, Բայազետը, Նոր Բայազետը և Սովետական Հայաստանի այն շրջանները, ուր վերաբնակվել են հիշյալ տեղավայրերից գաղթած արևմտահայերը (Թալին, Շիրակ, Արարատյան դաշտ, Ապարան)։ Մշո խումբն ամենից առաջ հատկանշվում է վեպի չորս ճյուղերի առկայությամբ, շեշտված վիպականությամբ, քնարական-երգային հատվածների սակավությամբ, Քեռի Թորոսի մշակված ու ամբողջական կերպարով և մի շարք վիպական ուրույն միջադեպերով, որոնք կամ բացակայում են Մոկաց խմբում, կամ շատ աղոտ ու թռուցիկ են հիշատակվում։

Մշո տարբերակներում մի առանձին ենթախումբ են կազմում Ալաշկերտի պատումները, որոնց մեջ հատկապես աչքի են ընկնում Խաստուրի տարբերակները։ Դրանցից երկուսն արդեն հրատարակվել են «Սասնա ծռերում»[3] և ունեն բանագիտական ու գեղարվեստական բացառիկ արժեք։ Այդ հանգամանքը նկատի առնելով, մեր արշավախումբը հետամուտ եղավ Խաստուրի նոր պատումների որոնմանը։ Համառ որոնումները տվեցին բավարար արդյունքներ։ Նախ՝ հայտնաբերվեց և գրանցվեց Խաստուրի ևս երկու նոր պատում, որոնցից մեկը Սեդրակ Աբաջյանի տարբերակն է, մյուսը՝ Սեգրակի «սկզբնաղբյուր-վիպասացի՝ Փրո Աբրեի որդու, այժմ Հոկտեմբերյանի շրջանի բնակիչ, Սմբատ Աբրահամի Գևորգյանի պատումը։ Հաստատվեց նաև, որ Խաստուրն ունեցել է վիպասանական ավանդական մի դպրոց, տարբեր սերունդների վարպետ ասացողներով։ Կ. Մելիք-Օհանջանյանի գրանցած և հրատարակած երկու պատումների ասացողներ Մանուկ Թորոյանն ու Կարապետ Թամոյանը վեպը սովորել են Խաստուրցի Ռես Գսպոյից (Գասպար Մելքոնյան) և Վարդանե Քոչեից։ Կարապետ Թամոյանի վկայությամբ՝ Ռես Գսպոն վեպը սովորել է իր՝ Կարապետի, հոր պապից՝ Դրմեից, որ եղել է հռչակավոր վիպասաց։ Սմբատ Գևորգյանի վկայությամբ՝ հայրը՝ Փրո Աբրեն, ևս վեպը սովորել է Ռես Գսպոյից, իսկ Սմբատն ու Սեդրակ Աբաջյանը սովորել են Փրո Աբրեից։ Այսպիսով, մինչև այժմ եղած տվյալներով, Խաստուրում վկայված է վիպասացների չորս սերունդ. 1. Դրմե, 2. Ռես Գսպո, Վարդանե

---

3 «Սասնա ծռեր», հ. Բ, Ա մաս, էջ 247—404, Մանուկ Թորոյանի և Կարապետ Թամոյանի պատումները՝ գրանցված 1932 թ. Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից։

Քոչե, 3. Մանուկ Թորոյան, Կարապետ Թամոյան, Փրո Աբրե, 4. Սեդրակ Աբաջյան, Հակո, Սմբատ Գևորգյան, որոնք վեպը միմյանց են փոխանցել և հասցրել մեր օրերը։ Այդպես, վիպական ավանդույթներով հարուստ Խաստուրից, բանահավաքների ջանքերով հայ բանագիտությունն այսօր ունի մի պատկառելի ժառանգություն՝ վեպի չորս ընդարձակ քառաճյուղ պատում (բացառությամբ մեկի), որոնք իրենց անխուսափելի տարբերություններով հանդերձ, ունեն վիպական սերտ միասնություն և վկայում են նախնական մեկ կամ ամենաշատը՝ երկու բանավոր սկզբնաղբյուրից սերված լինելու մասին։ Վիպասաց սերունդների այս անմիջական հաջորդափոխությունը և նրանց ավանդական վերաբերմունքը վեպի և վիպելու արվեստի նկատմամբ հաստատում է Խաստուրի վիպասանական դպրոցի գոյությունը։ Այս փաստն արժանի է ուշադրության հատկապես նրանով, որ հավաստում է Տարոնցի Կրպոյի վկայությունը՝ վիպասանական հատուկ դպրոցների գոյության մասին։

«Սասնա ծռերի» հայտաբերման 100-ամյակի առթիվ Խաստուրի նորագյուտ պատումներից մեկի ներկա տպագրությամբ, ի մասնավորի նշանավորվում է նաև այն իրողությունը, որ սա ևս պատկանում է Մշո տարբերակների տիպաբանական այն խմբին, ինչ մեկ հարյուրամյակ առաջ Գ. Սրբվանձտյանի գրառած Տարոնցի Կրպոյի պատումը։

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր
ԱՐՈՒՍՅԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԱԴՆԱՄԵԼԻՔ

Ժամանակոց Հայոց Խաչիկ Թակավոր կապրեր Զորու Խարաքիլիսեն.

Բայց Մսրա Մելիքին հարգադու էր։
Մե տղեմ՝ ուներ՝ անուն Թորոս էր,
Ախճգա անուն Արմաղան էր։
Արմաղանը շատ խորոտ կէղնի։
Մսրա Մելիքի մարդիկ էգան ուրանց տուրք առնելու.
էգան ուրանց խարջ տանելու, էգան,
էգան ըղեղ ախճգան տեսան։
Ցելան գնացին Մսրա Մելիքին պատմեցին, թե՝
10 Հայոց Խաչիկ Թակավորին մե Արմաղան անվոր ախճիգ մի կա՝
Շա՜տ սիրուն, շա՜տ գեղեցիկ։
Գելնի էդ մարդ յուգընգան* կը խրգե, թե.
— Գնացեք, էդ ախճիգ յուղեք, բերեք ընձի.
Եթե չտվեցին...— խոսք չէ, զորով բդի քաշին տանին։
էգան, ըդոց յուզընգներ էգան հասան Խարաքիլիսա։
Գնացին Խաչիկ Թակավորի տուն։
Վերջ, նստան, խոսացին էստից-էնտից. հարցուց՝ ըբը.
— Մենք էգեր ինք, օր՝ քու ախճիգ յուզինք մեր Թակավորին։
Ըսավ.— Մենք քրիստոնա, դուք կռապաշտ,
20 Մեր ախճիգ ձեր Թակավորին մենք չենք տա։
— է՛, չիդաք,— ըսավ,—զորով կը տանինք։
Ցելան գնացին, Մսրա Մելիքին յայտնեցին, թե.
— էդ մարդ չտվավ, թե՝ դու կռապաշտ իք, մենք քրիստոնա,
Մեր օրենք Թուլ չիդա՝ մենք ախճիգ տանք քրզի։
Ցելավ մարդ խրգեց.— Գնացե՛ք,—ըսեց,— եթե կը տա,
Կամով Թող տա, եթե չտվեց՝ զորով գիկամ,
Հայաստան քարուքանդ կէնիմ, կը տանիմ։
Նորից դառան էգան, ըսին.
— Բդի տա՜ս։ Խաթրով էլ չիդաս՝ զորով կը տանինք։
30 Տեսավ, օր զորի բան է մեջ,
Ցինք էլ չէր կըռնա Մսրա Թակավորի դեմ կռվեր,
Կանչեց ուր սինոտ. էգան ժողով ըրեցին։
— Ի՞նչ էնինք։ Արե՛ք,— ըսավ,— էդ մարդիկ էգած է գուզան.
Կռվի՞նք՝ չենք կըռնա, մըզի կըսպանին,
Չկռվինք էլ՝ զորով կը տանին։
Որոշեցին, թե.
— Ախպե՛ր, մե ախճիգըմ կորի՝ լավ է,

* Տպարանում համապատասխան տառանիշը (ֆ) չունենալու պատճառով ամենուր նշված փոխարեն օգտագործել ենք «յ», որն արտահայտում է հագագային «հ» բաղաձայնի բարրաւային ձայնեղ արտասանությունը։

1 Այստեղ և նման դեպքերում նշանակում է՝ որ։

Քան թե մի երգիր մի քարըքանդ էղնի։
Բնրին որոշեցին, օր ախոիգ տան Մսրա Մելիքին։
40 Յելան յուղընկներ գացին,
Թակավորին խաբար տվեցին, թե՝ էդ մարդիկ յոժար ին։
Էգան յուղեցին, ինչ որ աշխըրքի կարգն էր,
Արմաղանին տարան Մսրա Մելիքին կնությյան։

Մնաց մի ժամանագ։ Դե՛, հեքիաթ է, էլի՛,
Էրդու տղա էղավ։
Յառաջին տղի անուն դրեց Սանասար,
Յերգրորդին դրեց Ադնամելիք։
Տղեգներ մեծըցան, էղան տաս-տասերգու տարեգան։

Սենեքերիմ՝ Ասորեստանցու թակավոր,
50 Կռիվ հայդարարեց Մսրա թակավորի հեդ։
Յելան գացին կռիվ։ Կռվելու ժամանագ
Ասորաց թակավորը յաղտեց Մսրա թակավորին։
Էդի հեձավ ուր դեվեն[2], փախավ։
Օր փախավ, յեդեվեն յընգնելու ժամանագ տեսավ,
Օր բդի իրան բռնին,
Ուր կռքերուն մադաղ կանչեց էրգու տղին.
Ըսավ.— Եթե դուք ընձի աղադիք էս փորձանքից,
Ես իմ էրգու տղեն ձըղի մատաղ կ'էնիմ։
Սադանեն մդավ դեվի մեջ, փախցուց Մսրա Մելիքին բերեց։

60 Բերեց. ժամանադ մը յընցավ։
Էն մեգ օր Արմաղանին ըսավ.
— Արմաղա՛ն,— ըսավ,— կնի՛գ,— ըսավ,—
Ես իմ տղեք մադաղ իմ կանչի,— ըսավ,— մերունի կռքերուն։
Տղեք էղած է տաս-աասերգու տարեկան։
Արմաղանը էրեխեստանուն գաղտնի քրիստոնություն էր սովըրցըրի։
Ցիրգուն տղեք էգան, ըսավ.
— Սանասա՛ր,— ըսավ,— ձեր հեր ձըղի մադաղ ի կանչի կռքերուն.
Ըսավ,— Ի՞նչ էնինք։
Ըսավ,— Ի՞նչ բդի էնինք։
70 Ըսավ, —Փախնինք բդի։ Ձեր հերն օր ձըղի կըսե.
«Արե՛ք երգրպակություն էրեք կռքերին»,
Դու ըսեք օր. «Մենք չընք դինա,
Մեր մեր մըղի չը սովըրցուցեր ը,
Դու երգրպակություն էրը՛, մենք կը սովրինք»։
Էն ժամանագ կը զարգիք, կը սպանիք,
Ես ձիան կառնիմ այսինչ տեղ կը կայնիմ,
Դուք գիկաք, գ'եձնինք, փախնինք կերտանք Խաչիկ թակավորի մոդ։

---

2 Ուղտ։

Մերը էդ խրատ տվեց տղեգներուն։
Ու անցավ մե քանի օր։ Հերը կանչեց։
80 Կանչեց.— Տղե՛ք,— ըսավ,— ես ձեզի
Կռվու ժամանագ մադաղ իմ խոստացի կռքերուն,—
Ըսավ,— Բդի տանիմ մադղիմ։
Էգան տղեք մոր քով, ըսավ.
— Արդեն մըզի կանչեր է,
Բդի յէգուց մըզի տանա մադղելու.
Ի՞նչ էնինք։
Ըսավ.— Ես մեգ-մեգ թոփուզ[3] գը շինիմ, ձըզի կիդամ,
Գը պատիք ձերունի շորերու տագ ու կէրտաք։
Կէրտաք էնդեղ. եփ օր ձըզի ըսավ.
90 «Արե՛ք, երգրպակութուն տվե՛ք»,
Դու ըսեք օր. «Մենք չընք գինա,
Դու երգրպակութուն տո՛ւ, մենք էլ սովրինք»։
Որ ժամանագ օր երկրպակութուն կիդա,
Գը զարգիք, կը սպանիք։
Ես իրեք հադ ձի կառնիմ,
Կէրտամ պայմանավորած տեխ կը կայնիմ,
Գիկաք, կը հեձնինք,
Ձեր պար էլ թակավոր է,
Կը փախնինք կէրտանք իմ հոր տուն։

100 Կանչեց Մսրա թակավոր տղեգներուն տարավ։
Երգրպակութուն օր էրեց՝ տղեգներ թոփուզով զարդեցին,
Կռատան մեջ պադուցին, սրանեցին,
Փախան էգան, էգան հասան մոր։
Հեձան ձիան. ո՛չ ճար գինան, ո՛չ ճամրախ գինան։
Աստվածությունից հրիշտակ լուսնից, կրագից
Առաջնորդում էր տզոց,
Զօր էլ լույս էր առաջնորդ ըդոց։
Էդպես փախնելով՝ խաբարն յընգավ թակավորին, թե՝
Տղեգներ թակավորին սբանած, փախած է։
110 Յելավ զորք յընգավ յեդեվ ուրանց։
Էգան մինչ ի Խարաքիլիսու ձորեր.
Ուրանք մղարի[4] մեջ տապուգ են։
Տեսան՝ ուրանց պաշարած ը.
Աստվածությունից հրաշք էղավ, խառվան յիրար գիշեր,
Սկսեցին յիրար ջարդել.
Ուրանք մղարի մեջ տապուգ,
Մսրա զորք յիրար ջարդեցին,
Սպանին յիրար, ջարդեցին,
Դարձան, փախան գնացին։

---

3 Գուրզ։
4 Այր, քարայր։

120 Ըդոք յելան էգան, գնացին Խարաքիլիսա, իրանց հոր քով։
Դնացին հոր քով. հերը ուրախացավ՝
Թոռներն է էգի, տաս-տասնութ տարեգան տղեգներ,
Ախճիգն ի էգի։
Տարան ուրանց, խոսացին, իմացավ,
Օր զարգած է, սպանած է հոր, փախած է։
Ըսավ.— Իմ տնեն յելեք, գնացե՛ք, դու ընձի հարգավոր չի՛ք,
Ընձի ախճիգ էլ հարդավոր չէ՛, Թոռ էլ հարգավոր չէ՛։
Ցեգուց Մսրա Թակավոր լսեց՝
Գիկա, հայություն էլ գը կդրե։
130 Քեռի Թորոս մդաձեց.
— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,— ըսավ,—
Է՛, պա՛ռ,— ըսավ,— դու քու ախճգաց ու Թոռներուց գընցնիս,
Ես,— ըսավ,— իմ քուրոճից, իմ խարզեստաններուց[5] չըմ յընցնի։
Քաշեց ուր Վեցոդնեն Լադզին, հեձավ ուր ձին,
Ընգավ ըդոց յառեջն ու դեբի...
Չգիդա յինքն էլ՝ ուր կէրտա։
Էգավ։ Էգավ, էգավ յելավ Մշու դաշտ։
Էգավ Մշու դաշտ, հասավ Մեղրագեդին։
Ցիջան Մեղրագեդի քով,
140 Ուրանց համար հաց կերան, ջուր խմեցին, լվացվան.
Քեռին տեսավ, օր էն դիուց, սարից
Մե բարակ ջուր մի գիկեր.
Գիկեր, դը զարդեր Մեղրագեդի հակառակ կողմից, լենքից,
Գիկեր, գը զարդեր էստեխ խային[6].
Խայեն օր դեմ չառներ,
Դը զարգեր գեդին, կէրտեր։
— Արմաղա՛ն։
Ըսավ,— Ի՞նչ է, Թորո՛ս։
Ըսավ,— Մենք յելնինք,— ըսավ,—
150 Իդա ջրի յակունք մըզի համար տուն շինինք։
Էս ջուր խմող մարդը՝
Մեգ հազարին բադալ[7] է.— ըսավ։
Ցելան յընցան Մուրադ գետ,
Գացին էդ ջրի վերեվ, ըդոր յախպուրը գդան,
Բերեցին ուրանց հոլլըկ[8] մը շինեցին
Ու ըդոր մեջ աբրան։
Աբրան մե ժամանագ։ Գործ ուրանց ի՞նչ է՝
Քեռին ու եգյաններ կէրտեն, փորեն,
Կորեգ ցանեն, ջըլգըլ[9] գը ցանեն,
Ըդրով կաբրեն։

---

5 Խարզա, խարզե (հդն. Խարզեստան)— քրոջ կամ եղբոր որդի։ 6 Ժայռ, ապառաժ։ 7 Փոխարեն։ 8 Հոլիկ, քողտիկ։
9 Հացահատիկի տեսակ։

160 Արդեն Սանասար հասավ։
Սանասար հասավ, յիրգուն նստան.
— Արմաղա՜ն,— ըսավ,— մեր տղեն հասեր է,
Մենք բդի կարգինք։
Մենք քյասիբ, բան չունինք, աղքա՜տ, ի՞նչ էնինք։
— Ես ի՞նչ գինամ, դո՜ւ դինաս։
Բերին որոշեցին. էդդեն հայ՝ Բիթլիս, Բաղեշ կաբրեն,
Հայոց նորից թակավոր էր՝ Գագիկ թակավոր,
էն ժամանագ հայերուն թակավոր շադ կար,
Ցելավ գնաց էդտեխ, տղան տարավ հեդ։
170 Տղին օր տեսան՝
Աղքատություն էլ մոռացան, ամեն բան էլ մոռցան.
Տղին օր տեսան՝ ամենաուրախության, խնդալով բերեցին,
Ուրանց ախ՚իգ տվեցին Սանասարին։
Առան էգան։ Ուրանց տան մեջ կաբրին,
էդ կորեգով ու գըլգըլով, ուրիշ բան չունին,
Մե էրգու հադ էլ էձ ին պայե։
Ժամանագ ընցավ։ Մե տղե 'մ էղավ Սանասարին.
Տղե՝ մ էղավ, բերեցին անուն դրեցին Մհեր։

Մեծ Մհեր

Հնքիաթ ը, տղեն մեծցավ,
180 էղավ տաս-տասնհինգ տարեգան։
Կ՚էրտեր նեճրություն[10] կէներ։
էն մեգ օր էգավ մարդ, դադրեր էր.
— Օ՜ֆ,— ըսավ,— դադրեր իմ,— մամուն։
Քեռին ըսավ,— ի՞նչ էնիմ,— ըսավ,—
Ամո՜թ էղնի քու պաբուն,— ըսավ,—
Օր ինք թակավոր մը, չըկռնա քզի ձի մի տա,
Օր դու էրտաս, նեճրություն էնիս։
— Իմա՞լ,— ըսավ,— իմ պաբ թակավո՞ր է։
— Ըբը՜,— ըսավ,— քու պար Բաղեշ թակավոր է։
190 Ցելավ յառավոդ, էրգու հաղ կորեդի հաց դրեց ուր հըբան[11]
Ու դիրեց դեբի Բաղեշ։
Գնաց։ Գնաց, Բիթլիսին օր մոդեցավ,
Տեսան օր՝ էդ մարդն օր էգավ,
Սովորագան ուրանց մարդոստնուց չէր,
Իրեք, չորս մարդու բոյ է։
— Հա՜յ, հա՜յ, հա՜յ,— ըսավ,— Սասման ծո՜ւռ,
Իմկնի[12] Սասման ծուռ յուրդի՞ց էգավ։
Խառվան յիրար հոդղրներ.
— Հե՜յ, իմկընի լադոդնե՜ր,— ըսավ,—
200 Ես Գագիկ թակավորի,— ըսավ,— թո՜ռն իմ,— ըսավ։
էն մեգ ժուլիգ էր[13], վերցուց ուր քոլոզ ու քյաչալ,

10 Որսորդություն։
11 Մաղախ։ 12 Անպետք, անպիտան։ 13 Ծարպիկ։

Վազավ գնաց Գագիկ թակավորին մուժդա[14] տվեց, թե.
— Ցաճկդ լո՛ւս էղնի,— ըսավ,— քու թոռն էգեր է։
Էգան վերցին տղին տարան։
Տարան, մի էրգօր մի մնաց, վրա իրեքի.
— Պա՛ր,— ըսավ,— ըսկի չե՞ս հարցու, թե յորի՞ իս էգի։
— Ա՛յ տղա,— ըսավ,— դու իմ թոռ, էգեր իս իմ տուն, ի՞նչ հարց։
— Չէ՛,— ըսավ,— խո ես չէդեր իմ,—ըսավ,—
Հացափոր քու տունը մնամ։
210 Վերջ օր շադ ստիպեց, ըսավ,— Ի՞նչ է։
Ըսավ,— էգեր իմ, օր դու ընձի ձի մի տաս,
Օր ես էրտամ ձիով նեճրություն էնիմ,
Ես չըմ կոնա քելելով նեճրություն էնի։
— Է՛,— ըսավ,— լա՛վ, Մհե՛ր ջան,
Ցառավոդ կէրտաս,— ըսավ,— թամբի կէնիմ[15] մշկուն,
Թող ձիանուն բոլոր ցուց աա,
Որ ձին օր հավնար՝ էն էլ տանիս։
Գնաց տեսավ, օր ըգոց թավլեն[16] մե՛ձ թավլե մի,
Ամեք դեն քառսուն ձի է կաբուգ։
220 Գնաց, որի վրեն ձեռ դրեց՝
Փոր յիջավ գետին։
Տեսավ, օր իրան ձի պըդրցող չկա,
Էգավ, դոնեն բդի յելներ, տեսավ՝
Թառի տադ մե ծոդոդ քուռագ մի կա։
Ըսավ,— Կանի՛, գոմի՝մ էլ զարգիմ, իդա քուռագ սադգի,
Էս էլ էղնի անո՛ւն։
Ուժ հավաքեց, քաշեց, գոմի՝մ օր զարդեց,
Քուռագ դարձավ, ջուխտ չուֆտեն[17] զարդեց սրդին,
Թռավ թավլի վերի գլուխ կայնավ,
230 Կայնավ, դառավ աշեց, խրխնջաց։
Աշե՛ց, աշե՛ց, ըսավ.
— Իմ պար ընձի տա՝ էս քուռագն է,
Ջիդա՝ էս քուռագն է։
Տվեց՝ կը տանիմ, չտվեց էլ՝ գելնիմ կէրտամ։
Ցելավ գնաց դիվան։
Կանչեցին մշկուն, կանչին Մհերին։
— Ի՞նչ էղավ, մշա՛դ։
Ըսավ.— Ես չըգինա՛մ,— ըսավ,—
Որի վրեն ձեռ դրեց՝ փորձեց,— ըսավ,—
240 Մեգ էլ էգավ, զարդեց գոմի՝մե,
Էն քուռագ բդի սադգըցուցեր,
Էն էլ թողեց էգավ։
Ես չըմ գինա,— ըսավ,— բան մը չըմ հասկընա։
Կանչին Մհերին, ըսավ.
— Պաբ ջա՛ն,— ըսավ,— քու ձիան բոլոր լավ ձի ին,

14 Ուրախ լուր, աչքալույս։
15 Պատվիրել։ 16 Ախոռ, գոմ։ 17 Աքացի։

Բայց ես օր տարա,
Յէգուց չըն ըսի՞՝ էդ իմալ նամարդ մարդ էր,
Էգավ, ուր պարու ձիանու մեգ փագից[18] մե ձի 'մ առավ գնաց։
Ընձի կիդաս՝ էն քուռագ տու,
250 Ջիդաս էլ,— ըսավ,— քու ձիանն ընձի հարգավոր չէ։
Էդ մարդուն շա՛տ խոսացին,
Էդ շադից քի՛չ լսեց,
Քչից էլ ըսկի բա՛ն չհասկըցավ,
Թե՝ մինագ էդ քուռագն է։
Ուրանք չըն դինա, օր քուռագ էդ շնորք ունի։
Տեսան, օր հնար չկա, մյուս օր վերցին քուռագ,
Յուլար[19] դրեցին գլուխ, մե մշկու 'մ էլ տվեցին հեդ,
Քաշեցին տարան, քաղքից հանեցին։
Հեռեցավ, մշագ դառավ։

260 Մգա կը քաշե յուլար՝ քուռագ չի գա,
Է՛, յառեջ էրտա՝ կը փախնի։
Շատ օր չարչըրվավ, իլլաջ[20] կդրավ,
Բերեց քուռագ պառգըցուց,
Յուլըրով յօգներ կարեց,
Վերուց փեդն էցգեց յօդներու մեջն
Ու դրեց փիջին[21] ու դերի Քեռի Թորոսին գնաց։
Օր գնաց մոդեցավ Սասնա,
Էն ժամանագ էլ դուրբին[22] կար խո՛,
Քեռի Թորոս դուրբին դրեց յաճկերուն,
270 Տեսավ օր՝ փիջի վրեն փեդով բանըմ կա։
— Արմաղա՛ն,— ըսավ,—
Էդ քոպագօղլին[23] խապեր է տղին,— ըսավ,—
Ջո՛ւլ ու փալաս է տվի բերե էդ անամոթ,— ըսավ,—
Քաշե՛ ձիսի, էրտամ,— ըսավ,—
Թախթ-թաջ[24] վերանա[25] կը դառում գլխուն։
Էգավ տեսավ օր՝ ինչ տեսնի՝ քուռագ մի։
— Ա՛յ տղա,— ըսավ,— էս ի՞նչ իս էրի։
— Քեռի՛ ջան,— ըսավ,— ի՞նչ էնիմ,— ըսավ,—
Քաշիմ՝ չիգա,— ըսավ,— թողիմ՝ կը փախնի։
280 Իլլաշսի կդրավ, էս էլ կաբեցի,
Դրի փիջիս, առա էդա։
Քեռին հարձըգեց քուռագ, էստին-էնտին աշեց՝
Խաձեց մոութ. յինք ջանբաղ[26] էր։
— Քաշե՛, լաո՛,— ըսավ,— էսի հրեղեն ձի է,
Էդ յո՛ւրդից է ընգի էդտեխ, էդ էլ չգիտեմ,—ըսավ,—
Քաշե՛ էս քուռագ, տանինք։
Քուռագ քաշեցին տարան, պահեցին, մեձցին, էրեցին ձի,

18 Գոմ, ախոռ։ 19 Սանձ։ 20 Ճար։
21 Ուս։ 22 Հեռադիտակ։ 23 Շան որդի։ 24 Գահ ու թագ։ 25 Ավեր։ 26 Ձիագեա։

Անուն դրին Քուռգի Ջալադ
Ու սկսեցին աբրել ուրընց համար։

290 Սկսեց ուր նեհրություն էնել։
Քեռին տեսավ, օր արդեն Մհեր ձենձընվավ աշխարքի մեջ,
Բերեց ըդրան զըրի[27] 'մ ու թաս[28] 'մ ու թուր մի շինեց։
Աբրան իրենց համար։
Շագըցան, էղան յոթ, ութ, տաս հոգի,
Վերջապես, ուրանց համար կաբրեն՝
Կորեգով, դըյգրլով, իրեք հադ իձով։
Մհերն արդեն հասավ։ Քեռին ըսավ.
— Արմաղա՛ն, բի՛ր մեր տղեն կարկինք։
— Է՛, կարկե՛,— ըսավ։
300 Մհերին կարկեցին էսպես։
Մհերին էղավ էրգու հադ տղա՝
Մեձի անուն դրեցին Մանուկ,
Փոքրի անուն դրեցին Դավիթ։

Մսրա Մելիք լսեց, օր ուր հողի մեջ,
Ըսին, գյավուր[29] է էգի, տուն է շինի, կարրի։
Ցելավ քոմեց[30] ուրունի սինոտով, ըսավ.
— Էրտանք պդըդինք մեր աշխարք,
Տեսնինք, մեր աշխարք ի՞նչ դրուտյան է,
Ու էդ դյավուրին էլ,— ըսավ,—
310 Էրտանք, մեր տասչորս տարվա խարջն առնինք, յիգանք։
Ցելան էգան։ Էգան պդըդելով,
Օր էդան հասան Սասմա սայման,
Քեռի Թորոս լսեց, յելավ քոմեց ուր քանի հոգին,
Ձիով գնացին ըդոց յառեջ։
Ջրինդ[31] խաղալով էգավ Մհեր։
Որի փիջին ձեռք դներ՝
Կը ք.. եր թումբան ուրանց։
Մսրա Մելիքի հեդ էլ ձեռ բարև էնելուն,
Մինչի էդավ յելավ,
320 Ձեռ ըդոր փիջին էլ՝ որպես ախպոր,
Մուռդբրեր էր։
Տարան մաքրեցին, էգան նստան խոսացին.
Սարսափն առեր է, ըսավ.
— Քեռի՛,— ըսավ,— դու թողի՞ս,
Խնտրիմ, օր դու թուլ տաս, ես ու...
Ըսավ.— Դու մի՛ խնտրի,— ըսավ,— դու կարկադրե՛։
Ըսավ.— Չէ՛, կը խնտրիմ։
Ըսավ.— Ի՞նչ է։
— Թողի՞ս, ես ու Մհեր էղնինք ախպեր։
330 Ըսավ.— Խնտրի՛մ, էղեք, ի՞նչ կա, ես ուրախ չի՞մ.

27 Զրահ։ 28 Սաղավարտ։
29 Անհավատ։ 30 Հավաքել։ 31 Մական, մականախաղ։

Ես խնդանամ, օր,— ասավ,— իմ տղեն
Էղնի թակավորի հետ ախպեր։
Բերեցին էղան ախպեր։
Տասնուչորս տարվա խարջն էլ բաշխեցին։
Պայման կնքեցին՝
Ո՛րն օր շուտ մեռնի, էն մեգել էրտա,
Ընդոր տան, էրեխեստանուն տիրություն էնե։
Կերան, խմեցին, յառավոդ օր յելան գացին,
Ասավ.— Մհե՛ր, ես քու կին ու էրեխեք ճանչրցա,
340 Դու էլ արի՛ էրթանք,— ասավ,— իմ տուն,
Իմ էրեխեք, իմ ընտանիք ճանչրցի՛,
Օր ես օր մեռա՝ ղու յիգաս տեր էղնիս։

Ցելան հեձան ձիան, գնացին,
Մհերն էլ հեգ ուրանց։
Գացին ըդեխ, մի քանի օր մնացին։
Գնաց Մսրա Մելիք ուր տան դեն՝ կնդան.
— Կնի՛գ,— ասավ,— կը կանչիս Մհերին քու քով,
Գիշեր կը պայիս քու քով, չես թողնի յիգա։
Մշկուն էլ թամբի էրեց,
350 Օր Մհերի ձին թողա ուր խսրըխու[32] վրեն։
Էգան, յիրգուն կանչեցին, տարան։
Դե՛, ախպըրկին էր, խոսացին,
Օր յելավ, բդի յիգեր.
— Չէ՛,— ասավ,— ախպե՛ր,
Մեր օրենք էնբես է, օր գիշեր...
— Ա՛խր մենք ախպեր ինք...
—Չէ՛,— ասավ,— մեր օրենք էդպես է.
Գիշեր դու բդի մնաս իմ քով։
Գիշեր Մհեր մնաց քո՛վ։
360 Մհեր յառավոդ յելավ ու մնաս բարով էղավ,
Էգավ Սասուն։
Մենք խաբար տանք Մսրա Մելիքից։
Կինը տարի մի եդ պառգավ, բերեց տղե մի,
Եվ ձին էլ ծնավ, քուռադրմ բերեց։

Դ Ա Վ Ի Թ

Մհեր էգավ Սասուն։
Էգավ Սասուն, յընցավ մե քանի 'մ վախտ,
Հիվանդացավ Մհեր, մեռավ։
Խարար գնաց Մսրա Մելիքին, թե՝
Արդեն քու ախպեր մեռեր է։
370 Ցելավ էգավ, Քեռուն ասավ.
— Մեր պայման պայման է։ Ես էգեր իմ,

32 Մատակ ձի, զամբիկ։

Օր իմ ախպոր էրեխեքն ու կնիդ տանիմ պայիմ։
Տեսան, օր չէղնի, ըսավ.
— Մարա Մելի՛ք,— ըսավ,— կը խընտրի՛մ,— ըսավ,—
Եթե կին ու էրեխեք տանիս՝ մենք կը մեռնինք,
Դոնե կնիդ մնա մեր մոդ, մենք կնդով մխիթարվինք,
Տղեք էլ դու տար պայե։
Ցելավ յօժարացավ, առավ տղեք, առավ գնաց։

Գնաց պայեց։ Ցընցավ մի քանի 'մ ամիս։
380 Էրեխեքն օր կը խաղցուցեր,
Մանուկին օր կը դներ չոքի վրեն՝ բան չը էնե.
Դավիթին օր կը դներ չոքի վրեն՝
Ձեռ կը թալեր մուրուք,
Օր ձեռք չը բռներ,
Քաշեր մուրուք տեխեն կը հաներ։

Ցընցավ մե վախտ մի։
Կանչեց ուրունի խորհրդատուներին, ըսավ.
— Արե՛ք, ա՛յ մարտ,— ըսավ,— էս գյավուրի տղեն,— ըսավ,—
Օր մի չէ՝ օր մի իմ մուրուք քաշե,
390 Օր մի դ'էլնի,— ըսավ,— էդի փորձանք կէղնի իմ գլխուն։
Ես ըդոր գլուխ բդի մգավուց[33] կորում։
— Ա՛յ մարդ, էրեխա՛ է։
— Չէ օր չէ՛,— ըսավ,—էդոր միտք խալբ[34] է.
Էդի խա՛լբ է, էդի իմ գլուխ բան մի բդի հանե։
Տեսան, օր չէղնի, էն մեգ.
— Ա՛յ մարդ,— ըսավ,— էրեխա՛ ին, բերեք փորձ կատարինք։
— Ի՞նչ։
Բերեցին տարան դիվնի ներքև,
Մեսինի մի փալուտ փետի քոզ[35] դրեցին
400 Ու մեգ էլ՝ օսկի դրեցին։
Ըսավ.— Թո՛ր, թըխ էրտան,— ըսավ,—
Եթե գացին դեպի կրա՛գ, զըթեն էրեխա ին,
Թե դեպի օսկին գացին՝
Գիցի, օր միտք ուրանց խալբ է։
Մանուկին թողեցին։
Մանուկ դիմեց դեպի կրագ գնաց,
Ձեռ զարդեց կրագին,
Օր կրագ կբավ ձեռին՝ վառավ,
Վերուց զարգեց բերան՝ մռութ լե վառավ։
410 Ճոռ Մանուկ ըսեցին։
Թողեցին Դավիթին։
Դավիթ գնաց՝ դեպի օսկին դիմեր է ու կէրտա։

---

33 Մգա—այժմ, հիմա, մգավուց— այժմյանից։ 34 խարդախ։
35 Կրակ։

Հրիշտագ ասսուն դառուց ըսավ.
— Ա՛յ մարդ, յո՞ւր կէրտաս, դառի՛։
Դառավ դերի կրագ գնաց։
Մարդիկ, բարի մարդիկ շատ կան.
— Ա՛յ մարդ,— ըսավ,— գնաց, էդ էլ այիբլու[36] կէղնի,
Մե տղեն այիբլու էրեցիր,
Մեգել լե այիբլու կենիս։
Վերցին, վերցին բերեցին։

Քեռի Թորոս ուրմ[37] աշեց, թալեց ուրմ,
Թուր քաշեց՝ թրի բերան ժանգոտոդեր էր։
— Արմաղա՛ն,— ըսավ,— իմ Վեցօղնեն լազգին բաշե՛ք.
Ես էրտամ,— ըսավ,— էրեխեք նեղության մեջն ին։
Ցա՛ հասնիմ, յա՛ չ'ասնիմ։
Քաշեցին ձին, հեձավ էգավ։
Էգավ Մսըր յիշավ։
Դավիթն էգավ, ըսավ.
— Մեգել տղեն յու՞ր է։
Ըսին.— Մեգել հիվանդ է։
Գնաց տեսավ, օր բերան վառեր է։
Դե՛, ամեն տեղ էլ բարի մարդ կա, ամեն ազդու մեջ էլ կա,
Հաղորդեցին, օր գործըն էստեսակ կէղնի։
Էգավ խնդրեց Մսրա Մելիքին,
Առավ տղեգներ էգավ։
Արդեն Մսրա Մելիք էլ զվզացեր է, ճիշտ ըսած։

Բերեց տղեգներ։ Տղեգներ մեձըցան.
Ուրանք շադրցած է։
Գարուն է։
Տեսավ, օր բուլուգ[38] մի, յինք բդի էրտա փոյե,
Կորեգ ցանե, օր բերե ըդոց պայե։
Էգավ.— Աստվա՛ձ վերու ձըղի,— ըսավ,—
Էղեր իք քառսուն ջան,
Ե՞ս բդի ձըղի համար աշխատիմ։
Դավիթն էլ տաս-տասնյոթ տարեգան տղա է։
Էգավ տեսավ, օր Դավիթ խսիլ մի թալեր է տագ,
Զըմբիլ[39] մ' էլ դրեր է գլխու տագ
Ու քնուգ է։
— Է՛յ,— ըսավ,— ջոջ յօռ Դավի՛թ,— ըսավ,—
Դու էրտաս էղնիս նախրջի՛,
Քու հախ առնիս կորե՛գ,
Տանիս ջաղաչ աղա՛ս, բերի՛ս,
Արմաղան մա՛զե, շաղե՛, թխե՛,
Էս ձեռքով դնիմ էս բերան՝

36 Արատավոր։ 37 Հմայել, գուշակել։
38 Ջոկ, խումբ, շատ։ 39 Ոզոտից հյուսած փոքր աթոռ։

Ձեմ հավատա՛։
Դավիթ.— Քեռի՛,— ըսավ,— ի՞նչ էնինք։
— Ի՞նչ բդի էնիս, աստվա՛ծ վերու ձըղի,
Գացե՛ք Մշու դաշտ,— ըսավ,— նախրջու վախտ է,
Գացե՛ք էղեք նախրջի, հորթարաձ,— ըսավ,—
460 Հախ ձըղի առեք բևրեք, էստեղ աբրինք։
— Վոյլա՛,— ըսավ,— բեռի՛, ես կէրտամ։
Մարե՛, իմ յօդ ու գլուխ սարքը՛, կարդըդնը՛,
Ես կէրտամ կէղնիմ նախրջի։
Բերեցին կդոր մի կարգըդնեցին,
Փեդ մի դրեց փիջին, գնաց։

Գնաց, գնաց Մշու դաշտ,
Գանձակ անվոր դյուղ կա, էնդեղ գնաց։
Գարուն է. նախրջի բդի բռնին,
Գեղ էղեր է էրգու բարի.[40]
470 Մե բարը մե մարդու գուզե,
Մե բարը մի մարդու գուզե,
Բայց չըն համաձայնվի։
Գնաց, օր հարցրին.— Ի՞նչ մարդ իս։
Ըսավ.— Էգեր իմ, նախրորդ կէղնիմ։
— Է՛լ,— ըսավ,— մըզի նախրորդ հարգավոր չէ,
Էս տղեն կէնինք մըզի նախրորդ.
Ո՛չ ձեզնից է, ո՛չ էլ մեզնից է, խարիբ մարդ է,
Թը՛խ էղնի մըզի նախրորդ։
Բերեցին Դավիթին էրեցին նախրորդ։
480 Յելավ յառավոդ, թողեց ուր մալ կէրթա։
Գարուն է, գարնան մալ, մալեր ղաբուն է,
Կը տըլվին, գընգնին չամըռներ։
Ցիրգուն, որի կովն է, հորթ, մալ՝ դընգնի չամուռ,
Գը վերու, կը բերե, տանե հանձնե տիրոջ։
— Վայ Դավիթ ջա՛ն,— կըսին,—
Քի՛չ աջխադիս, շա՛դ ուղիս, դու յո՞ւրդից էգար։
Հարի դիկեն կըսեն, հարի խաբար գը բերեն,
Լձենք սել, կէրտենք, բերենք, արդեն կը սադգեր.
Էլ ո՛չ սելի ինք մենք մուխտաջ[41] էղնի, ո՛չ էլ մալի։
490 Պայեց, մինչի էդավ մայիս, յընցավ հունիսի մեջ։
Մալ արուն առեր է, մոզ կենը,
Ամեգ ուրին դիյով մի գը փախնի,
Ցինք մենձ մարդ, էտդին գը վազնի, էնդին գը վազնի,
Քրդնի, հնար չէղնի։
Էնտեխ էլ Քեռին տեսավ, օր Դավիթ չկա.
Իրեք-չորս ամիս յընցավ։
— Արմաղա՛ն,— ըսավ,—

40 Մաս, խումբ։
41 Կարիք, ապավինում։

Ցելի՛, կդոր մի կարգըդան, թել, բան տուր,— ըսավ,—
Էրտամ, էդ ծուռ գընիմ,— յո՛ ւր է,
500 Ըդոր վրեք-գլուխ,— ըսավ,— կարգըդնիմ, յիկամ։
Ցելավ առավ թել, կարգդան, գիկա։

Էգավ էնտեխ, էգավ էդ գեղ։
Ըսին, օր՝ հոս է նախրջի։
Ցելավ գնաց, տեսավ, օր՝
Մալ զարգեր է մեր Օմո գեղի պես մե դաշտըմ,
Էնդիուց գը փախնին՝ էն դեն գը վազնե,
Էնդիուն գը փախնին՝ էն դեն գը վազնե։
Տեսավ օր չէղնի, մե կով մի շատ հոգին հանեց,
Կզավ դեղնին, կզավ գեղին, օր քար վերուց,
510 Տվեց կողքից, մեգել կողքից քար վզալով դուրս էգավ,
Գնաց յընգավ։
Քեռին տեսավ՝ գնաց յիջավ քարի վրեն։
Աշեց, օր Քեռին էգեր է։
— Քեռի՛,— ըսավ,— էդ ի՞նչ է կէնիս։
— Աստվա՛ծ վերու քըզի,— ըսավ,—
Մորթը՛, մարդու կով չը մըռդըլի։
— Չէ՛, Քեռի ջան, էդ ի՞նչ է։
— Տո՛,— ըսավ,—կեծգի քար է,
Աստվա՛ծ արեվդի ըսպանե,
520 Քըզի կէնիմ թուր,
Օր քու թուր ապառաժ քարեր ճղը։
— Վա՛յ,— ըսավ,— մեռնիմ Քեռուս գլխուն,—
Ու կովու գլուխ կդրեց։
Կով մորթեց, կը տանե, ըս հաղ կանիծեն.
— Դավի՛թ, շա՛դ աշխադիս, քի՛չ ուդիս,
Բիբադի մորթեցիր, բերեցիր։
— Ա՛յ մարդ, էն ժամանագ, օր չամռեն, տլվեն,
Չըն յիդե, ղաբուն, չուդվեր.
Մգա, ասո՛ւն փառք, խլա՛վ[42], շա՛ղ՝
530 Միսն էլ կուդվի, եղ էլ ձրզի սաբոն կէնիք,
Էլ ի՞նչ դուզիք ընձնե։
Քեռին էր, բերեց ըդոր վրա-գլուխ կարեց, կարգըդնեց,
Ցելավ, գնաց։

Նախրջի է ուրին համար։
Էն մեգ օր նախիր թողեց գնաց,
Տեսավ, օր սինոռի[43] գլուխ մե հինգ-վեց նախրջի կա.
Էգան, էղան յոթ դեղի նախրջի։
— Ա՛յ մարդ, էս ի՞նչ է։
Ըբը ըսին.— Այսինչ գեղ հոգու հաց է դրած,
540 Խրգինք, էրթա, կդոր մի հոգու հաց բերին,

42 Գեր, պարարտ։
43 Սահման (հողամասի)։

Մենք էլ ուդինք։
Էդան բերեցին որոշեցին Դավիթին, ըսին.
— Դու գնա՛, մենք քու նախիր կը պայինք։
Ըսավ.— Լա՛վ, իմ նախիր պայեք, ես կէրտամ։
Դնաց։ Դնաց տուն, տեսավ, օր մե ջայել հարս մ'է,
Մարդ չկա տուն։
— Քուրի՛դ ջան,— ըսավ,— ձեր տնեցիք յո՞ւր ին։
Ըսավ,— Գացած է ժամ, ախպե՛ր ջան։
Ըսավ.— Կդոր մի, ձըր էդ մըռլի խերուն,
550 Ձեր էդ հոգու հացից տվե՛ք,
Մենք էլ՝ յոթ գեղի նախրջի,
Քոմեր ինք ձըր սինոռի գլուխ,
Տանինք, ուդինք,— ըսավ։
— Ախպե՛ր ջան,— ըսավ,— մանցի՛,
Հըրի ժամեն յելնին յիգան,
Մընչի տերտեր չիգա, տիրացու՝
Մենք չենք իդա։
— Ա՛խր, հրրի ես մնամ, նախրջի իմ,
Մալ կը գողնան, տանին։
560 — Չէ՛,— ըսավ,— ես չեմ իգա։
Ցաճկ պդոգցուց, տեսավ, օր ճոպան ամբրի գլուխն է,
Ճոպան բերեց, ձեռ թալեց,
Բղիդ թընդրեն հանեց,
Ճոպան թալեց բղդին, շալգեց,
Փարխըջի[44] եղ առավ մեգ ձեռ,
Տաջտ գլխեց, դրեց գլուխ,
Տաշտ թնդրա վրեն դրուդ էր,
Դդըլներ ղաբգեց խայիշն ու վերցուց,
Դաստեմ՝ էլ հաց զարդեց խոլթուղ[45].
570 — Աստվա՛ծ օղորմի,— ըսավ,— ձըր մեռելներուն,—
Ու գնաց։
Հարս վազավ ժամ, ըսավ.
— Արե՛ք, օր,— ըսավ,— նախրջին տարավ։
— Խեր ըդոց համար է, թըխ տանը՛։

Դավիթ թըխ գա էդտեղ, հոգու հաց, հարիսա տանելու,
Մենք խաբար տանք նախրջոցից։

Քառասուն հատ գողեր թալին նախրի վրեն,
Դավիթի նախրից քառասուն հատ անծին էրինջ ջոգին,
Առնին էրթան։
580 Օր տարավ դրեց, տեսավ, օր մարդ չիգա հաց ուդելու։
— Ա՛յ մարդ, արե՛ք, կերե՛ք,
Թե յուշ իմ էգի, քիչ իմ բերի՝ ըսեք։
— Տո՛, ի՞նչ սև-մութ ուդել,— էն մեգ ըսավ,—

44 Պղնձե փոքր կաթսա։ 45 Անութ, թևատակ։

Դու օր գնացիր, գողեր էգան,— ըսավ,—
Քու նախրից քառասուն հատ էրինջ ին տարած։
Ըսավ.—Ի՞նչ էնիմ,—ըսավ,— դե՛, դուք իմ մալին մուղաթ կեցե՛ք։
Բերեց մե գափոն[46] մի հաց փաթեց յիրար.
Զարգեց եղի մեջ, էրեց բուռմա[47],
Եղ թափավ գոշերուն, ու ուգելեն գնաց։
590 Գնաց, օր հեռեցավ դաշտից, յընգավ խամ տեղ.
Մալի արդեն դաֆս[48] էրեվաց,
Մալի դաֆսի հետ գնաց, գնա՛ց,
Տեսավ, օր, ա՛յ մարդ, եռեսունին էրինջ կա, կարձան.
Ու ո՛չ շենք կա, ո՛չ բան կա։
Գնաց տեսավ օր՝ մե մղարե մ՚է,
Մե էրինջ մորթած է,
Քառսուն հոգի մղարի մեջն է։
Բռնեց քառսունի գլուխ էլ կդրեց, թալեց դուրս։
Մդավ մղարեն, տեսավ օր, ի՞նչ տեսնի՝
600 Քառսուն տարի օր բերին, չը խլսի՛.
Ըդոց քառսուն տարվա գողություն հոդ քոմուգ։
Ցելավ էն մե էրինջ դրեց պղնձի մեջ, թողեց հոդ,
Եռեսունին էրինջ էլ տվեց յառեջ,
Քշեց էգավ, խառնեց նախրին,
Բերեց ցերեգով՝ հո՛, հո՛, հո՛, քշեց բերեց էրեց գեղ
— Արե՛ք,— ըսավ,— ձեր նախիր,
Ձեր հե՛րն էլ անիծիմ, ձեր նախի՛րն էլ...—
Ու թողեց գնաց։

Գնաց։ Գնաց հասավ տուն։
610 Քեռին գացեր էր կորեգ գը ջրեր։
Ցերեկվան էգավ տեսավ, օր Դավիթ պառգուգ է։
— Հե՛յ գիդի,— ըսավ,— շոջ յօռ Դավիթ,
Դու էրտաս էղնիս նախրջի՛,
Քու հախ առնիս կորե՛գ,
Բերիս, տանիս ջաղաց, աղա՛ս,
Արմաղան մա՛ղը, շա՛ղը, թըխը՛,
Էս ձեռքով դնիմ էս բերան՝
Ջեմ հավաղա՛։
Ցելավ.— Քեռի՛,— ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ։
620 — Գրո՛ղ տանե քըզի,— ըսավ,— ինչ...
— Քեռի՛ ջան, ի՞նչ ըսիր։
Մեգ էլ էդ խոսք շարունակեց.
— Դու էրտաս, էղնիս նախրջի՛,
Քու հախ առնիս կորե՛գ,
Տանիս ջաղաչ աղա՛ս, բերի՛ս,
Արմաղան մա՛ղը, շա՛ղը, թըխը՛,

46 Կույտ։
47 Մեծ բրդուճ։ 48 Հետք։

Էս ձեռքով դնիմ էս բերան՝
Չեմ հավատա՛։
— Քեռի՛,— ըսավ,— մենք քանի՞ հոգի ինք տնեն։
630 Ըսավ.— Աստվա՛ծ վերու քդի,
Քըզնով քառասուն չան ինք։
Ըսավ.— Ամեգուդի մեդ-մեգ չվալ,
Մեդ-մեգ չրիդ[49] գը պադրաստիք,
Ընձի էլ էրգու հադ չվալ գը զարգիք յիրար, կարիք,
Արեվն օր պադավ, ընձի ձեն կիդաք։
Հըմալ տեխ 'մ իմ գդե օր, Քեռի՛,
Քառասուն տարի կրինք՝ չը խըլսի[50],—
Ու պառգավ քնավ։
Բերեցին, ինչ օր ըսեր էր, պադրաստեցին,
640 Էգավ արեվ պադավ, էգավ.
— Ցելի՛, յելի՛,— ըսավ,— սուտխոսան, յելի՛,
Ընանք[51] յո՞ւր բդի տանիս մըդի, յելի՛։
Ցելավ, յընգավ յառեջ ուրանց, էգավ։
Էսդին, էնդին՝ Քեռին դադրեր է, գուզե դառնա,
Քեռու ձեռ խայիմ բռնեց,
Չէ՛, գաշելով էգավ, գդավ։
Էգավ մզաբեն գդավ, բացին տեսան, օր հաստատ,
Ինչպես օր կըսե՝ լիքն է։
Բերեցին չորից, օսկուց լցեցին քառասուն էլ, չալգեցին։
650 Էրինչ դրուդ էր պղնձի մեջ,
Բերեց փեդ մի էցգեց էդ պղնձի կանթներ, ըսավ.
— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Ես իմ քյաբըբցուն չեմ թողի հոս։
Առավ պղինձ էլ, էգավ։

Էգան։ Էգան, յառավոդ՝ մեգ էղավ պադաշար,
Մեգ էղավ ծածկող, մեգ էղավ չամուռ էրող։
Ըսավ.— Քա՛ր վըր քարին, սո՛ն վըր սան,
Էրեցին Սասուն։
Էղավ Սասո՛ւն։
660 Ու ուրանք մանցին էդտեղ, աբրան։
Դավիթ կէրտա, նեճրություն կէնե։
Բայց Մսրա Մելիքին ըդոց սայման Ծովասար կա.
Բադան[52] քաշուգ է, մեջ ծառեր,
Ու ինչքան օր չին-չանավար կա՝
Ըդոր մեջ կա։
Օր գիկա ամառ, ըդեղ գիկան սեյրան էնելու։
Քեռին ըսավ.— Դավի՛թ,— ըսավ,—
Արեվելք, արեվմուդք, հարաֆ կէրտաս,

49 Պարան։ 50 Սպառվել, վերջանալ։ 51 Տեսնանք— տեսնենք։
52 Պարիսպ։

Հուսիս չէրտաս։
670 — Յընչի՞, Քեռի՛,— ըսավ
Ըսավ.— Հուսիս կոդըշով բոլոշ կա,
Հեռեվանց,— ըսավ,— մարդու գը կլու[53]։
— Է՛,— ըսավ,— Քեռի,— չը՛մ էրտա։
Յելավ, նեճրություն կէներ։
Օր մի, բան չընգավ ձեռ, դառավ դերի Հուսիս։
Գնաց տեսավ, օր տղե մի
Գմեշ կանգըցեր է ջրի վրեն, գը լվա։
— Տղա՛,— ըսավ,— հեռո՛ւ գնա,
Էդ կոդշով բոլոշ մգա ընձի գը կլու։
680 — Իմկընի՛,— ըսավ,— Սասման ծո՛ւռ,
Ես՝ էրեխա, ընձի չը կլու...
— Գնա դե՛ն,— ըսավ,— Քեռին ըսեր է, ընձի գը կլու,
Մգա գը զարդիմ։
Տղեն օր տեսավ՝ հնար չէղնի,
Չը կըրնա խոսք հասկըցու,
Յոդ դրեց գըմշու կոդշին, յելավ հեձավ։
Մդաձեց. «Ա՛յ մարդ, էդ էրեխեն օր չը կլու,
Ընձի յընչի՞ գը կլու»։
Էգավ ըսավ.— Էս ի՞նչ է։
690 — Իմկընի Սասման ծո՛ւռ, հըլը գնա՛ Մշու դաշտ,
Տե՛ս,— ըսավ,— յոթ լուձ գըմեշ գը լձին,
Գութան կէնին, վար կէնին։
Հբը ըսավ.— Էս ի՞նչ է՝ էնդեղ կերեվա։
— Հաստա՛տ օր,— ըսավ,— Սասման ծուռ իս,
Էդի,— ըսավ,— Մսրա Մելիքի Ծովասարն է։
— Տո՛ իմա՞լ՝ Մսրա Մելիքի Ծովասար։
— Հբը, էդի Մսրա Մելիքի Ծովասարն է։
—Տո՛,— ըսավ,— քու հե՛րն էլ անիձիմ,
Մսրա Մելիքի՛ն էլ.
700 Էգեր է, իմ յախպին[54] էրեր է ուրին Ծովասար։
Գնաց մդավ, մե դիուց քանդեց բադան,
Մդավ տեսավ, օր ինչքան ջին ու ջանավար կա՝ կա մեջ։
Ուր նեճիր էրեց, պադ մե դիուց քանդեց։
— Գացե՛ք, իմ հոր խերուն,— ըսավ,—
Ձըզի համար աղադ ապրեք։
Յելավ, էլի էդ քարեր դրեց յիրար վրա,
Դրեց փիշին, էգավ։
Էգավ՝ յուշացավ։
Քեռին տեսավ, օր Ծովասարու թարաֆեն[55] գիկա.
710 — Տղա՛,— ըսավ,— էդ յուրդի՞ց է...
— Քեռի՛,— ըսավ,— հըմալ տեխ մի 'մ գդի,

53 Կուլ կտա։
54 Արտ։ 55 Կողմ։

Օր քառսուն տարի կըրիմ,— ըսավ,— չը խըլըսի։
— Ա՛յ տղա,— ըսավ,— էդի Մսրա Մելիքի Ծովասարն է։
— Հը՛մ, Մսրա Մելիքի Ծովասար...
Մսրա Մելիքի հե՛րն իմ անիծի,
Իմ յախպին Մսրա Մելիքին յընչի՞ բդի էղնի Ծովասար։
Էգավ, վերջ համոզեց, թե.
— Ա՛յ տղա, գիկա, թակավոր է, մըզի գը կդրե։
Շադ օր խոսաց.
720 — Քեռի՛,— ըսավ,— էլ չեմ էրտա։
Քեռու միտքն էլ էն է, օր յառավոդ էրտա,
Էդ էրգու-իրեք քար դնե յիրար վրա,
Ու էդպես էլ յընցնի էրտա։
Օր քնան ըդոք, Դավիթ՝ օր Դավիթ իս,
Գողեգող յելավ, ուր չարներ[56] գողցավ,
Էցկաց յօդներն ու գնաց։
Գնաց քանդեց, մե դեն քանդեց, թափեց,
Ջանավարներ փախան.
Քանդեց ծառներ բիրադի թափեց դուրս,
730 Ու բեռ 'մ էլ կորեգ էր ջալդի տարե հեգ,
Սկսեց կորեդ ցանել։
Քեռին յառավոդ յելավ տեսավ՝ օր Դավիթ չկա։
— Ցա՛, տո՛,— ըսավ,— էդ յո՞ւր է ծուռ.
Ըբը ըսավ.— Գացեր է Ծովասար։
Ցելավ էգավ։ Էգավ տեսավ օր՝ քանդեր է,
Դավիթի ավեր է դառուցի,
Ցիստագ բադան-մադան քանդեր է։
— Տո՛,— ըսավ,— թըխ էրտան ըսին՝
Ընդոր թուր կդրե ըդ իմ ջեղ։
740 Սարքեց ուրին յարտ, կորեգ ցանեց։
Քեռին տեսավ, օր Դավիթի ավեր էրեր ը,
Դառան էգան։
Խաբար գնաց Մսրա Մելիքին, թե՝
Քու Ծովասար քանդած է, Դավիթն է։
— Է՛յ դիդի,— ըսավ,— ես էն վախտ ըսեցի,
Օր ըգրա ջինս[57] խա՛լբ ը։
Ցելավ մարդիկ խրգեց, ըսավ.
— Գնացե՛ք,— ըսավ,— տեսեք՝ ի՞նչ է էղի,
Ու մեր յոթ տարվա խարջն էլ,— ըսավ,— առե՛ք։
750 Դավիթի գլուխ, Մանուկի թեվ, Արմաղան՝
Կը բերիք մըզի։
Ցելան էգան։
Ըդոց մարդիկն օր էգան, բդի գան խարջի,
Մե կնիգ մի էգեր էր ջրի.

56 Տրեխներ։
57 Աղն, ցեղ, տոհմ։

Տեսավ օր էգան, ըսավ.
— Էդ յո՞ւր էգաք քըց շուն վազան,
Էդ յո՞ւր կէրտաք քըց գել գազան։
Ըսավ.
— Ք..ոդ, ք..ոդ, ք..ոդ պարե՛ր,
760 Մդե՛ք տներ՝ էրե՛ք դիվան,
Նստե՛ք դիվան՝ էրե՛ք շիվան.
Կէրտանք Սասուն առ ու թալան,
Ջղալ[58] եզներ բերինք լՃան,
Կեռիգ կովեր բերինք կթան,
Կարջ կնգրտիք՝ յերգանք աղան,
Ցերգեն կնգրտիք՝ ըռաշի[59] համար էրտան-յիգան։
Դավիթի գլուխ, Մանուկի աչ բազուգ, Արմաղան՝
Տանինք Մսրա Մելիքին՝ հոլ խաղան։
Ըսավ.
770 — ..... ձըր պարուն, թը՛ տան, թը՛ տան։

Յելան էդան։
Էգան, Քեռի Թորոսին կանչեցին, բերեցին, ըսին.
— Մենք,— ըսավ,— էգեր ենք՝
Քառսուն տարվա խարջ բդի՛ տաք։
— Քեռի՛,— ըսավ,— ի՞նչ խարջ.
Ուրանք՝ Մսըր, մենք՝ Սասուն,
Ի՞նչ խարջ տանք ըդոց։
Քեռին ինչ էրեց-չէրեց՝ չէղավ։
Էդ օր կերուխում յուղեցին։
780 Քեռին ըսավ.— Իդը խմցունք,
Բըլքեմսի[60] համոզինք, ճամպու դնինք, էրտա։
Կէրտանք էնտեխ ծառեր կը տնգինք,
Մե ստից բան մի կէնինք։
Բերեցին, էդ յոթ կանթնե պղինձն, օր բերեր էր մաղարից,
Լցեցին գինին, դրեցին մեջ, սկսեցին խմել։
—Քեռի՛,— ըսավ,— թուլ կիդա՞ս,— ըսավ,—
Էս պղինձ դինին,— ըսավ,—
Իմ հոր հոգեհանգստության համար խմիմ։
Ըսավ.— Խմե՛, Դավի՛թ ջան։
790 Վերուց, դրեց բերնին, յիստագ էդ գինին խմեց.
Դավիթ եղավ շող-շողագան,
Սմբուլ-գդագան՝ յընգավ։
Ըդոք էգան։ Էգան, խարջ գուզին, շադ խոսացին,
Մեգ էլ յիմցավ. յիմցավ, յելավ տեսավ.
— Էս ի՞նչ բան է։
Մամ ըսավ թե.— Էգաձ է՝ խարջ գուզին,
Աստվա՛ձ քու արեվ ըսպանե,

58 Մկանուտ, ջլուտ, ամրակազմ։ 59 Ջարդարանք, շնորհք։
60 Գոնե, գեթ։

Գացիր Ծովասար լե քանդեցիր,
Մդա էգած է,— ըսավ,— խարշ գուզին։
800 Ցելավ էգավ, էլ չաշեց.
Որին՝ յագռեն քաշեց, զարդեց ճագատ,
Որին՝ յաճկ հանեց,
Որին՝ յանդաշ կդրեց,
Տասերգուսն էլ յուզի-գոզի, բելիսըզ[61] էրեց։
Ըսավ.— Գնացե՛ք, ձեր թակավորին ըսեք՝
Թը՛ղ ընդրա թուր կդրե իմ ճեռ։
Ցելան գնացին։
Գնացին։ Որ ժամանագն օր գացին,
Էդ կնիգն, օր ջրի էր գացի,
810 Էլի պադահավ.
— Հա՛, էդ յո՞ւր գացիք քըց գել-գազան։
Էդ յո՞ւր դառաք քըց շուն-վազան։
Ըսավ.
— Ք..ոդ, ք..ոդ, ք..ոդ պաբե՛ր,
Մդե՛ք տներ՝ էրե՛ք դիվան,
Նստե՛ք դիվան՝ էրե՛ք շիվան։
Գացինք Սասուն առ ու թալան,
Գիցանք՝ Սասումա տեղ դուզ ու մեյդան,
Չգիցանք՝ Սասումա տեղ քար ու կապան,
820 Մեջ մարդ կա, դը զարդե, բրին[62] գը բանա՝ խաչ-պադուհան։
Դավիթի ճ.. ու պ.. գարնան հեղղին,
Գան, ձըղի յերգանք աղան։
— Դե՛,— ըսավ,— ..... ձըր պարուն, իմալ օր տեսաք,
Գացե՛ք, ձըր թակավորին հըմալ էլ պադմեք։
Ցելան գնացին։

Գացին հասան Մսըր։
Թակավոր տեսավ օր՝ բիրադի յուղի...
Պադմեց, ըսավ.
— Դավիթն,— ըսավ,— մեզի էս օրին քցեց...
830 Ըսավ.— Ես է՛ն օր գինենք,
Օր Դավիթ մեր գլուխ էս գը հաներ։
Ըսավ.
— Թղթի՛դ մի գրիմ արնես-մսես՝ խրգիմ հարաֆային,
Թղթի՛դ մի գրիմ արնես-մսես՝ խրգիմ հուսխսային,
Թղթի՛դ մի գրիմ արնես-մսես՝ խրգիմ արեվելյան,
Թղթի՛դ մի գրիմ արնես-մսես՝ խրգիմ արեվմդյան,
Թող դա՛ն իմ Բագլի բեգե՛ր,
Խաչ պարոննե՛ր,
Սագռի[63] գլխնե՛ր,
840 Թիյագ լեզվե՛ք,

61 Երեսն ու աչքը անճանաչելի դարձրած, այլանդակված։
62 Վերք։ 63 Սակառ—մեծ քթոց, կողով։

Բայ յագռե՛ք՝
Սաֆա՞ր[64] է վըր գյավուրին օր՝ սաֆա՞ր է։
Մսրա Մելիք կազմեց զորք,
Ու էլ հողի՞ն, թփի՞ն հաշիվ կա՝
Ըդոր զորքին չկա,
Հավաքեցին ու էգան.
Դհոլ-զուռնեն էցկեցին յառեջ,
Զարգելով էգան Սասուն։

Էգավ։ Խաբար տարան Քեռի Թորոսին, թե՝
— Մսրա Մելիք՝ քար ու փեգ, հող դառեր է զորք, էգավ։
— Է՛,— ըսավ,— ի՞նչ էնինք։
Բերեցին էլի խմցուցին Դավիթին,
Էրեցին շող-շողազան,
Սմբուլ-գդագան, քյալլին պադուցին,
Ուրանք յելան եռեսունին հոգով
Ուրանց տըմբլիգ[65] ծեձեցին,
Գացին ուրանց չադըր զարդեցին,
Զորքի դեմ կայնան։

Արմաղան նստավ լաց։
Լաց, արցունք թափավ Դավիթի յերեսին,
Ցիմցավ, յելավ.
— Մարե՛,— ըսավ,— յորի՞ դիլաս, յորի՞...
Ըսավ.— Աստվա՛ծ վերու քըզի, յորի գիլամ՝
Ընդոր Սովասար քանդեցիր,
Բիրագի յուզի-գյոզի բեյլիսըզ էրիր, խրդեցիր,
Առաձ ը հաքին զորքով, էգաձ ը։
Մգա էն հալիվորուն հոն կըսպանին,
Գիկան հոս էլ՝ իմ գլուխ ու քում կդբին։
— Մարե՛, ըբը ի՞նչ էնինք։
— Ես ի՞նչ գինամ՝ ինչ էնիս։
— Մարե՛, ըսավ,— յելի՛, սաջ դի՛ր,
Բիր փուդ մի աղանձ էրե՛,
Տո՛ւ, ես ուդիմ՝ բըլքի մեռնիմ։
Ցելավ բերեց սաջ, դրեց կրադ, գնաց ձավրի։
— Մարե՛,— ըսավ,— ես ըդրնե իրեք փուդ էլ ուդիմ՝
Զըմ մեռնի։
— Ըբը ի՞նչ, տղա՛։
— Ինա նուգանոց[66] քարեր բի՛ր, թա՛լ մեջ, թըղ կարմրի,
Ես իմ բերան կը բանամ, դու թա՛լ իմ բերան։
Կնիգ էր՝ համոզվավ։
Բերեց էրգու հադ քար, թալեց սաջի մեջ, կարմրավ.
— Դե՛, արի,— ըսավ,— ի՞նչ էնիմ։

64 Արշավանք։ 65 Փոքրիկ թմբուկ։ 66 Նուգի—ծանրության չափ=320 գրմ.-ից 1282 գրմ.։

Էգավ ըսավ.
— Ես իմ բերան կը բանամ, դու վերո՛ւ, թա՛լ։
— Ինչո՞վ վերում։
Ըսավ.— Շորո՛վ, ինչով։
Էն օր շոր վերուց,
Բռնեց մամու ձեռներ, քամեց քարի վրեն.
— Մարե՛,— ըսավ,— իմ հոր ի՞նչ կա։
890 — Աստվա՛ծ վերու քըզի,— ըսավ,— թո՛ր, ըսիմ։
Թողեց։ Ըսավ.—
— Քու հոր կա ձի մի,
Գուրզ, գլխու թաս, զըրխ, թուր։
Ըսավ.— Ցո՞ւր է։
Տարան ցույց տվեցին։

Գնաց տեսավ օր՝ Քուռգի Ջալադ,
Քաշեց, լավ մի յելավ թիմրեց,
Բերեց զըրխն ու թուրըն, հակավ զըրխըն՝
Ինչ օր մուգ պադի կարաս։
900 — Մարե՛,— ըսավ,— բամբագ բե՛ր։
Բերեց Մարենը բամբագ,
Զըրխի մեջ, թասի մեջ լցեց, հարմարցուց, յելավ.
— Մարե՛,— ըսավ,— իմ հոր ձիուն ի՞նչ շնորք կա։
— Լաո՛,— ըսավ,— քու հոր ձիու մարիֆաթ՝
Օր համբախ չը գիցար, թողիս դիզգին[67] ուր ըզին,
Ցինք կէրտա։
Ո՛ր կողմն օր գնաց, դիզգին բդի չը դառուս։
Հեծավ ձին ու կանչեց ուր աստվաձ, գնաց։

Գնաց, չը գինա՝ յուր կէրտա։
910 Ձի յո՞ւր է տեսի,
Թուխալ անջա՛խ կըռներ քելեր,
Քուռգի Ջալադի պես ձի է հեձի։
Ձին թողեց ուրին, ձին գնաց։
Գնաց, յիջավ, տեսավ օր՝ մե բանցը՛ր տեխ մ՝է։
Աշեց, օր մոմ, բան է վառաձ.
— Բանձըր Մարաթուխ Աստվաձաձի՛ն,— ըսավ,— մեռնի՛մ քըզի։
Ցիջավ էդտեխ, աղոթք էրեց, ու քուն տարավ,
Քնավ։ Քնավ, մեգ էլ էրաձ տեսավ.
«Դավի՛թ,— ըսավ,— յելի՛,
920 Քու յուխտըդ ընդունելի էղավ,— ըսավ,—յելի՛,
Սուրբ Նշան գլխուդ տագն է,
Համբուրե՛, դի՛ ծոցդ,
Հեձի՝ Քուռգի Ջալադ, յիջի ձոր՝ դուշմընի մեջ.
Քու թուրը դուշմընին կը ջարդե,
Ու դուշմընի թուրը քըզի գիր չէնեխ»։

67 Սանձ։

Յելավ տեսավ օր՝ լցվեր է,
էդ է, գլուխն էլ տրաքի, սխմեր է զըրխ ջան։
Քանդեց հանեց բամբագ, բիրադի թափեց։
— Մեռնի՛մ քըզի,— ըսավ,— Բանձըր Թուխ Աստվածածի՛ն,
930 Իդաք լե քըզի,— ըսավ,— Ճրագի պադրուք։
Յելավ հեձավ ձին, գնաց։

Գնաց, տեսավ օր՝ ի՛նչ տեսնի.
Քեռին մե դոշի հեդ զարդեր է ուր եռեսունին չադըրն,
Ու էնդեն էլ զորքին հա՛դ ու հաշիվ չկա,
Լցված է...
«Ի՞նչ էնիմ, էրտամ դերի Քեռի Թորո՛ս,
Բդի ըդոք ըսին՝
Էնդոք ի՞նչ էրեցին, դու ինչ բդի էնիս.
Է՛, թե էրտամ դերի Մսրա Մելի՛ք։
940 Քեռին բդի ըսե՝
Վախեցավ, շադի կողմ գնաց։—
Ըսավ.— Թողիմ ձիու ումուդին, յո՛ւր գնաց՝ գնաց»։
Թողեց ձիու ումուդին,
Ձին քշե՛ց գնաց ըդոց թարաֆ։
— Է՛յ,— ըսավ,— յո՞ւր է Մսրա Մելիքի չադըր։
— Իմկընի Սասման ծո՛ւռ,— ըսավ,— չե՞ս տեսնի,
Էն, օր, է՛, խնձոր չադրի ճոթին կա։
Քշեց գնաց.— Բա՛րև ձեզ։
— Բա՛րև։
Ըսավ.— Սաֆա՛ր է։
— Եթե սաֆար է,—ըսավ.—ընձի մոդ չադըր տո՛ւր,
Իմ ձիուն՝ ե՛մ[68], ընձի էլ՝ կերագո՛ւր։
Դառավ ըսավ.— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Մեր տան մարդ իրեք դիր[69] բդի վորձե ուր դուշմընին։
Մեգ էլ դարձավ.— Մելի՛ք աղա՛,— ըսավ,—
Յեգուց մայա՛մ-մայա՛մ[70] գյավուրի վրեն սաֆա՞ր է։
Ըսավ.— Սաֆա՛ր է։
— Ընձի մոդ չադըր,
950 Իմ ձիուն՝ ե՛մ, ընձի՝ կերագո՛ւր։
Մեգ էլ դառավ.— Մելիք աղա՛,— ըսավ,—
Յեգուց մայա՛մ-մայա՛մ սաֆա՞ր է։
Ըսավ.— Սաֆա՛ր է։
— Դե՛, ընձի մոդ չադըր տո՛ւ,
Իմ ձիուն՝ ե՛մ, ընձի էլ՝ կերագո՛ւր։
Բերին չադըր տվեցին, գնաց պառգավ։

Աղոթրան չըր բացվեր է, յելավ։
Յելավ բոռաց.

---

68 Կեր, ուտելիք։ 69 Անգամ։ 70 Շտապ-շտապ։

— Ով քուն է՝ զարթեցե՛ք,
960 Ով զարթուն է՝ ձիան թամբեցե՛ք,
Զավրի՛ք անուն կտրըճի։
Իրեք դիր բոռաց ու յելավ հեձավ ձին։
Ցելավ հեձավ ձին,
Քեռի Թորոս էնդիուց ուր տըմբլիգ տփեց ու յընգավ մեջ։
Սկսավ ջարտել։
Ըսավ.— Քուռգի՛գ, դու վազա՛, Քուռգի՛գ,
Թրի՛կ, դու կդրե՛, Թրի՛կ։
Աջու կը ծորե, ձախու կը ծորթըփե,
Ծորգլուխ դէլներ
970 Քառասունուհինգ մանուգ օնպա գը կանգըցեր,
Արնե հեղեղ զէլներ, նուգանոց քարեր կը գլորեր։
Իրեք անդամ էսդիուց գնաց, էնգին էգավ,
էգան, յինք ու քեռի Թորոս առան յիրար։
Զարդին, էգան հասան յիրար,
էգան հասան յիրար, չը ճանչըցան յիրար.
— Հա՛,— ըսավ,— տղա՛, քու դո՞րն է[71], թե՝ իմ դո՞ր։
— Չէ՛, ըսավ,— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Մեր տան մարդ ուր դոր մարդու չը տվեր է։
— Դե՛ լավ,— ըսավ։
980 Գուրզ թալեց։ Գուրզ օր թալեց,
Քեռին բոշաթմիշ[72] էրեց, ուրին թալեց ձիու տագ։
Գուրզը շան պես օռնաց,
Գուբնի պես պոռթեց, գնաց։
Թռավ յելավ Քեռին.
— Հա՛ն, տղա՛,— ըսավ,— իմ դո՞րն է։
— Քցի՛ր,— ըսավ։
Զարդեց։ Օր զարդեց, այար[73] բոշաթմիշ էրեց՝ չը՛կըցավ։
Ցոռու թշից մե կողմե զարդեց, պադռեց, առավ գնաց։
— Հա՛, տղա՛,— ըսավ,— իմ թուր քարեր կը ծագեր,
990 Քըզի բան չէրե՞ց։
Քու հերա-հերանին ըսե՛,
Քու մերա-մերանին ըսե՛։
Իմ թուր աբառաժ քարեր կը ծագեր,
Քըզի գիր չէրե՞ց...
Ըսավ.— Իմ հերա-հերանին Թորո՛սն է,
Իմ մերա-մերանին էլ Արմաղա՛ն է։
— Վա՛յ,— ըսավ,— Դավի՛թ ջան, դու ի՞ս։
—Քեռի՛, դու ի՞ս։
— Հա՛։
1000 Ցիջան։ Ըսավ.
— Ի՞նչ է էղի,— ըսավ,— խո բան չի՞ էղի։

71 Հերթ։ 72 Բաց թողնել, ազատվել։
73 Թամբ։

— Չէ՛,— ասավ,— ինչ օր լու մի խաձեր։
Յիշան տեսան օր՝ ի՞նչ լու, պոռթի գացեր է...
Ինչքան օր փալան ու ձիու փթիր կար՝ լցեցին,
Հաղիվ կոցան լցին, կարեցին։
Էդտեխից էլ վերցրեցին ինչքան ավար բերեցին Սասուն՝
էն էլ ուրանք գինան։

Դավիթ ալրձավ։
Իրըն համար կէրտեր, կը պդրդեր ձիով։

(Շարունակելի)